ԴԻՄՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ

Հայաստանի և Արցախի վերջին իրադարձությունների կապակցությամբ Լիբանանի հայկական կուսակցությունները Բեյրութում ԽՍՀՄ դեսպանությանն են ներկայացրել մի դիմում-նամակ, որը նրանք հասցեագրել են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովին: Դիմումում մասնավորապես ասված է.

Լեռնային Ղարաբաղի ու Խորհրդային Հայաստանի ներկայիս դժվարին կացությունը մեզ դրդում է հայ ափյուռքի անունից մեր խորին մտահոգությունն ու բողոքն արտահայտել այն վտանգավոր իրավիճակի առթիվ, որի մեջ հայտնվել է հայ ժողովուրդը:

Ադրբեջանցիների հանցավոր ձեռնարկումներն ընդդեմ հայ ժողովրդի, որը խաղաղ ճանապարհով պահանջում էր պահպանել իր ազգային, հոգևոր ու մարդկային իրավունքները, ոչ միայն ոտնահարում են մարդու իրավունքների միջազգային նորմերը, այլև բազմազգ Խորհրդային Միությունում բնակվող ժողովուրդների բարիդրացիության սկզբունքը: Ադրբեջանի կողմից Խորհրդային Հայաստանի և Ղարաբաղի շրջափակումը խարդավանքների ու դավերի մի նոր վկայություն է: Այդ անվայել ձեռնարկումը, որն ուղղված է ժողովրդի կենսական պահանջմունքների ու ֆիզիկական գոյատևման դեմ և իրականացվում է ատելությունից կուրացած ադրբեջանցի ամբոխների միջոցով, տեղի իշխանությունների հովանավորությունն է գտնում:

Եղնելով Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայերի համար ստեղծված տագնապալի վիճակից, հայ ափյուռքի անունից դիմում ենք ձեզ՝ շտապ կարգով միջոցներ ձեռնարկել Հայաստանի շրջափակումը անհապաղ վերացնելու, Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգությունն ապահովելու համար, Ղարաբաղի բախտը որոշել՝ հաշվի առնելով ռեգիոնի հայերի արդար պահանջները:

(Արմենպրես)